

մանում է մասնագիտական բաժինը, որտեղից
աւարտում է 1896 թուին:

Բ. լսարան փոխադրուած ուսանող
Մուշեղ Տէր Գարբեկեանը դիմում է ազգին
վեհափառ Տ. Տ. Մկրտչ կաթողիկոսին առան-
ձին խնդրով որ իրեն ընդունեն կուսակրօն
միարանութեան շարքը. նրա խնդիրը յար-
գուում է և 1894 թուից նա ճանաչուում է միարան Մայր աթոռի:

Յաջող աւարտելով մասնագիտական բա-
ժինը՝ ձեմարանի փարզութիւնը վեհափառի
համար ուղարկում է նրան Կիելի հա-
մալսարանը իրաւաբանութիւն և նկեղեցական
իրաւագիտութիւն ուսանելու՝ հանգուցեալ
Գևորգ Փրիդոնեանի յիշատակին եղած կտակի
արդինկով:

Հենց ա. տարին 1897 թուին նա հա-
մալսարանում ընդունուում է ազգա ու-
սանող և նոյն թուականի վերջում առաջին
կարգի վկայականով աւարտում է առաջին
լսարանը, միևնոյն ժամանակամիջոցում պատ-
րաստուում էր գիմնազիոնից հասունութեան
վկայական ստանալ, որ և յաջողուում է 1890
թուին դեկտեմբեր ամսի սկզբին, և այդ թուա-
կանից նա ճանաչուում է համալսարանում
իրեւ ուսանող Բ. լսարանի:

1899 թուին արդէն հիւանդացած էր
նեարդային թուլութեամբ. 1900 թուին փո-
խադրուում է, ո. Պետերուրուրդի համալսարանը,
որանու առանց այն էլ նորա առողջութեան
խնդրումը աւելի սաստկանալով կրծքի
թուլութեան և թոքախափ է փոխուում:

Օգոստոսին նա դարձաւ Մայր աթոռ, թո-
քախան արդէն ընկճն էր նրան. մի քանի ա-
միս ևս անցաւ և նա հրաժարուեցաւ աշխար-
հից, ուղղի մէջ թողնելով իրեն բարեկամներին
և ծանօթներին:

Մուշեղ սարկաւագը իւր թէ աշակեր-
տական և թէ ուսումնական կեանքում օրի-
նակի է, եղել իր ընկերակիցների համար, նա
ոգեսրաւել է իսկական դործով և առանց
աղմուկ հանելու նպաստին է դիմիլ: Այն
ակնելութիւնները, որ տախի է Կիելի հա-
մալսարանի յարդելի ուսուչապես ող. Եղիա-
զարեանը Մուշեղ սարկաւագի մասին իրեն
կովասանական կատըներով: Կարծ ժամա-

նակում իւր աշխատասիրութեամբ, ընդունա-
կութեամբ և համեստութեամբ նա կարողացել
էր համալսարանի վարչութեան ուշադրութիւ-
նը և ուսուցչապեաների սէրը գրաւել:

Կիւրակի մարտի 14-ին հանգուցեալի դիակը
Մայր Տաճար իջեցրին. Նրա գագաղը զարդար
ուած էր թարմ ծաղիկներով և պատկերով, որ
արուած էին ձեմարանի ուսուցչական խմբի և
աշակերտաների կողմից. վերջինս հիւսուած էր
թարմ ծաղիկներից: Քառասուն նահատակ մա-
նուկների տօնի օրն էր արժ. Կարապետ վրդ. մի
դամբանական խօսեց Մայր Տաճարումն ներկա-
յացնելով հանգուցեալին զիստութեան աշխա-
տասիրութեան և պարտաճանաչութեան նահա-
տակ մանուկ: Կիակը միարանական գերեզմանա-
տուն արարան ձեմարանի գաւթով, առաջից գլ-
ուում էին ձեմարանի սաները, ապա երգեցիկ
խումբը և պատկանիկները: Ձեմարանի գաւթում
ուրարակիը ուսանողներից մէկը մի դամբա-
նակնով արայայտեց այն ցան ու թախիծը:
որ հանգուցեալը թողնում էր իւր ընկերնե-
րի և մատաղ եղբայրների վրայ այսպէս շուտ
հեռանալով, այդ միջոցին աշակերտաներից ումանք
թարմ ծաղիկներով զարդարում էին հանգու-
ցեալի գագաղը: Վերջին հրաժեշտը առեցն իրա-
գերեզմանի հօտ հանգուցեալի ձեմարանաւարա-
ընկերներից մէկը՝ և. Նորարևեանը: Տեսարանը
սրտաշարժ էր, յուզարկաւորութեանը աւելի
տիրութիւն էր տախի արժ. Կոմիտաս վար-
դապետի առաջնորդութեամբ երգուած քառա-
մայն «Աշխարհ ամենայնը», որ շատերից ար-
ցունքի կաթիլներ խեց:

ՏԵՇԿԱՀԱՅՔ.

—Կլսենք թէ Աղդ. Հիւանդանոցի Հոգաբար-
ձութիւնը կազմեր է Յանձնաժողով մը, որ պաշտօն
պիտի ունենայ Հիւանդանոցի կալուածներուն սե-
փականութեան եղանակը ճշաելու և ըստ օրինի
աւելի ապահով վիճակի մէջ դնելու համար մի-
ջոցներ խորհել և արդիւքը աեղեկազրել Հոգա-
բարձութեան Այդ Յանձնաժողովին անդամ կար-
գուած է նաև յարաբերական գիւանի տեսուչ Խա-
չատուրեան Կարապետ էֆ., որուն արդէն Վար-

չութեան կողմէ ասկէ առաջ յանձնարարուած էր ընդհանուր Ազգային հաստատութեանց սեփական կոլուանելը ապահովելու համար ծրագիր մը պատրաստել և ներկայացնել Արքութեան:

— Պողոս Նուռար փաշա 150 սոկի բաշխած է շոյի արձանին նոյն քաղաքին մէջ բացման հան- Ազգայանդրից աղքատաց: Իր հօր՝ Նուռար փա- յէսին առժիւ:

— Ա. անայ Ստեփան վ. Աղաղատեան, Պաշ- քալէի առաջն. Տեղապահ կարգուած ըլլալով, Պատրիարքարանէ զրուեցաւ յէջեալ վ.-ին, որ փոթոյ իր պաշտօնափայրը, և տեղւոյն վանրին դարդացման համար հարկ եղած հոգածութիւնը ունենայ:

— Պաղտատէն Պատրիարքարան հասած գրու- թեան մը կտեղեկանանը թէ Ա. իշակին հանգուցեալ Պատրիարքական փոխանորդ Տ. Երիստակէս եպիկ. Գերձակեանի յառարկաւորութիւնը անդի ունեցեց է Յնի. 16-ի Գշ. օրը: Ցուղարկաւորութեան ներկայ գտնուեր են ուռասական հիւպատոսը, քրան- ստիկան փոխ-հիւպատոսը, անզլիական պահականա- ւուն հրամանատարն և սպաները, բոլորն ալ հա- մազգեստով, անգլ. միսիոնարութեան պաշտօնէու- թիւնը, քաղցեացի, ասորի Հայ-Հռոմէական և լտարին հասարակութեանց երեւլք: Ցուղարկաւո- րութեան միջոցին հանգուցելոյն լուսանկարն հա- նուելք յետոյ: մարմինը տեղւոյն Ս. Երրորդու- թեան և կեղեցւոյն աւագ գրան դէմ ամփոփուեր է, ապլիմէր Պոլսեցի հանգուցեալ Մեսրոպ վրդպ.-ի: որ Պաղտատի առաջնորդ և նոյն և կեղեցւոյն հիմ- նադիրն եղած է, Պաղտատի Գաւառային Արքուն- թիւնն այս առթիւ բանիրուն և կեղեցւոցականի մը նոյն Վճակին առաջնորդական տեղապահ կարգուիլը ինդրած է Պատրիարքարանէն:

— Արքանցին ձայն մը. — Անշուշտ ամէն զգա- յուն Հայ սրտի անհօւն բերկրութեամբ կարդա- ցած պէտք է ըլլայ շարաթ օրուան Ազգ. թէրթե- րու այն լուրը թէ Գրիգոր էֆ. Քարակէօզեան նժնարեարար նամակ մը ուղղելով Ազգ. Անդը, Արքունիք յանուն քարեյիշատակ Տիգրան էֆ. Քարակէօզեանի ժառանգորդաց: Խոստացած է 20,000 սոկին տարեկան տակուը 800 սոկի Պատ. Վարչութեան տրամադրութեան տակ գնել Ա. ար- քութիւնն ինք պատշաճ տեսած կերպով գործածե- լու համար, Իրաւի հանգուցեալ կատարարն իսկ եթէ ողջ ըլլար, չենք կարծեր որ ասկէ աւելի կինսական, ասկէ աւելի օգտակար ու այժմէութիւն ունեցող ինդրէ մը տարբեր բանի կարենար գոր- ծածել, մանւանդ երբ հարիւրաւոր որբոց առող- ջութիւնն ի վտանգի է տեղւոյ անձկութեան ու վարակիչ մէնոլորտին պատճառաւ:

— Անհասարեան վարժարանին մէջ թատերա- կան ներկայացում մը տրուեր է ի նպաստ Կարնոյ

Նորիմիսիմեան Ա. արժարանին, Ներկայ գտնուեր են տեղւոյն Ա. սեմ. կուսակալը, Հրամանատար փա- շան, հիւպատոսական մարմինն և այլ բարձրաստի- ճան պաշտօնեայք, Ա. սեմ. կուսակալը մարդասի- րարար բարեհամեր է գումար մը նուրիել ի նպաստ նոյն վարժարանին, և անոր գեղեցիկ օրինակին հե- տեւեր են նաև իր հետեւորդը և հիւպատոսական մարմինը, 14 սոկոյ չափ գումար մը հանգա- նակուեր է:

— Որոշուեցաւ Ամերիկայի Հոգեոր հովիւ Յովուեփի եպիսկ. - Էն տեղեկութիւն ուղել Նիւ. Եղբքի այժմու Հոգեոր Հովիւ Սահակ վրդ.-ի մասին, որ ժամանակաւ Հոգեորութեանը բնակարանը գտնուիլ կաղմելու համար Յանձնաժողով մը՝ որ Ս. Պատ- րիարքին նախադաշութեամբ գումարուելով, պաշ- տօն պիտի ունենայ հարկ եղած գործողութեանց ձեւնարկել: Նոյն վարժարանի հաստատութեան 25 ամեակին լրման առթիւ գնահատման հաւաստիք մը ընծոյելու վարժարանին հիմնադիր Պէրպէրեան էֆ.-ի ծառայութեան:

— Արքայի երեան վարժարանի նախակին սանուց կողմէ Ս. Պատրիարքին մատուցուած խնդրագիրն ստորագրողներէն ումանք հրաւիրուած են վաղն ա- ռաւատական Հոգեորութեանը բնակարանը գտնուիլ կաղմելու համար Յանձնաժողով մը՝ որ Ս. Պատ- րիարքին նախադաշութեամբ գումարուելով, պաշ- տօն պիտի ունենայ հարկ եղած գործողութեանց ձեւնարկել: Նոյն վարժարանի հաստատութեան 25 ամեակին լրման առթիւ գնահատման հաւաստիք մը ընծոյելու վարժարանին հիմնադիր Պէրպէրեան էֆ.-ի ծառայութեան:

— Հիւանդանոցի շէնքին մէջ կան այսօր 133 որբեր երկու սեռէ, որոց 10-ը Հիւանդարանին մէջ են զանազան հիւանդութեամբը, մէկ կամ կամ երկուքը թոքախտէ վարակուած են: Մնա- ցեալները մեծագոյն մասամբ փոքր տղայք են, կէս առ կէս մանչ և աղջիկ:

— Տրապղոնէ Ազգ. Պատրիարքարան և կան հիւանդիր մը կծանուցանէ թէ Տ. Բարգէն Ռ. Ա. օրինաւորապէս Առաջնորդ ընտրուած է Տրապղոնի:

— Կարգացուեցաւ Կեսարից առաջնորդ Տ. Տրդան եպիկ.-ի մէկ տեղեկագիրը, որով ն. Սըր- բաղնութիւն կը հաղորդէր տեղւոյն աղջայիններէ Խուպէւէրեան Կարապետ աղայի մահն և անոր վա- ւերական կտակին մէկ օրինակը, որուն համաձայն հանգուցեալն 3000 լիրա կտակած էր աղջին, պայ- մանաւ որ այդ գումարին առկուը բաժնուի աղջա- յին որոշեալ հաստատութեանց, կտակակատար կարգելով Պոլսոյ Պատրիարքն և ուրիշ մէկ քանի երկելի աղջայինները, Ս. Կանադահն հոգեուց մը կարդաց և հանգուցելոյն յիշատակն օրհնելէ յե- տոյ Ս. Պատրիարքին յանձնուեցաւ, բանակցելով միւս կտակակատարներուն հետ, հարկ եղած կար- գագրութիւնն ընել անոր գործադրութեանն համար:

— Ազգ. Պատրիարքարանի շէնքը պատշաճ գիրքի մը վերածելու համար եղած ջանքերը վեր- ջապէս իրականութիւն կդասնեն ու այսօրուընէ կէկի նորոգութիւնը, Ճարտարապէտ Մելիտոսիան

ՄՀի. Գրիգոր Էֆոհի յանձնուած է նորոգութեան գործը. Ընդունելութեան զահլիճը մանաւանդ բռուրովն պիտի նորոգուի և կահաւորուի: Կրօնական Ժողովը համար: որ ցարդ ընդունելութեան սրահին մէջ կումարուէր: մասնաւոր սինեհակ մը պիտի յատկացուի: Առաջին սանդուխին վրայ գտնուած չենքը վար պիտի առնուի և վարդապետաց յատուկ սենեակներ պիտի շինուին: որպէս զի հիւր վարդապետները պիշերելու տեղ ունենան: Նորոգութեան և կահաւորման ամբողջ ծափը 500 սոկին աւելի կհաշուուի: Այդ գումարը բարենէր անձերէ հանգանակութեամբ ձեռք պիտի բերուի: Պատրիարքանի լուսուէին վրայ բեռ ըլլլալու համար:

— Հիւանդանոցի հոգարարձութեան Տեղեկադրին մէջ, որուն հաշուական մասին վրայ խօսեցանք մեր Ծր. օրուան թուղվարուամասն տեղեկութիւններ տրուած են Հիւանդարանի: Վիրաբուժարանի: Յիմարանոցի: Որբանոցի և վերջապէս Հաստատութեան յարակից ամէն մասերուն վրայ, բաղդատական ցուցաներով և մանրամասն վիճակագրութիւններով: Հիւանդանոցի բաժանումներուն, թշկական մարմնոյն և պաշտոնէութեան վրայ: Բնչպէս նաև կատարուած և կատարելի բարեկարգութիւններու վրայ խօսելէ ետք: Տեղեկադրի կըսէ թէ անցեալ տարւոց շրջանին 1638 հոդի դարմանուած Են Հիւանդանոցի մէջ: 1076ը ներքին հիւանդութեանց և 562ը վիրաբուժական բաժնին մէջ: Տանամեայ շրջանին Հիւանդանոց դիմող 1017 անձերու 428ը տեղացի, և 589ը դրսնցի են, մեծ մասամբ թուրքիոյ գաւառներէն: իսկ մի փոքր մասն օտարահպատակ: Դարմանուած են նաև մի քանի օտարազգիներ: Ընդհանրապէս դրսեցի: Հիւանդաներու 3/4-ն այր և 1/4-ը կին են: Միջին տարիք՝ 51—60.

— Քնիկ Պոլսեցի Անդրանիկ Գավուքճեան անուն անձնն: որ ասէկ շուրջ 10 տարի առաջ ամուսնացած է: իր օրինաւոր կինը լքանելով, Մշշյ Մանակերտ զիւղը դացած և գեղացի աղջկան մը հետ կրկն ամուսնացած էր: տեղոյն Առաջն. Փոխանորդ Տ. Յարութիւն քահանապէս առաջանաւած էր: Տեղոյն համար կամ գունդի ալ ունեցած է եղեր, կդիմէ Պատրիարքարան և կպահանջէ որ երկրորդ ամուսնութիւնը շեղեալ նկատուի և իր ամուսինն իրեն վերաբարձուի: և կամ գոնէ իրեն ալ արտօնութիւն տրուի կրկն ամուսնաւոր: Խնդիրը Տրապանի առաջնորդարանէն քննուելով, արդիւնքը կտեղեկագրուի Պատրիարքարան և կյանձնուի Կրօնական Ժողովը նկատողութեան: Միւս կողմէ կիմանանք

թէ Մանազկերտի մէջ կրկնամուսնութիւն պահանգուց բահանան վախճանած է: Արդ: Հետաքրքրական է պիտնալ թէ Կրօնական Ժողովն այս մասին ինչ տնօրինութիւն պիտի ընէ:

— Ծափին-Գարահիսարի առաջնորդական տեղապահ Տ. Սմբատ Դ. Արդ-ի խնդրանաց վրայ, Յանձնաժողովն որոշեց 25 ոսկիի նպաստ մը տալ նոյն վիճակի ալքատաց բաշխուելու համար: և ամսական ն ոսկւոյ գումար մը յատկացուեցաւ գիւղական վարդարաններ հաստատելու համար նոյն Վիճակին մէջ:

— Տ. Նշիշէ եպսէ: Պուրեան այս Մայիսին պիտի կտատարէ իր առաջին ձեռնադրութիւնը, արմեղական աստիճան տալով իր աշակերտ վեց սարկաւագի:

Քաջարական Ժողովն յետ խորհրդակցութեան: որոշեց Գարաբէօղիան կտակի հասութամբ եր կալուածներու համար յատկացուած գումարին տոկոսն Էզդ. Հիւանդանոցի Հոգարաբութեան տրամադրութեան ներքե գնել: որպէս զի Հոգարաբութիւնը կարենայ պէտք եղած կարգադրութիւններն ընել: և մասնաւանդ հոգ տանիլ որբերու սնդեան:

— Ծափին Գարահիսարի Ցեղապահն կմեկնի Հելլենական շողենաւորի: իրեն հետ տանելով առաջնորդական ընտրութեան հրահանգը, նաև 25 լիրայի նպաստ մը՝ կարօտելոց սերմնցու ցորեն և գարի բաշխելու: և 5 ոսկիի վարկ մը՝ գեղային մի քանի գորգոցներ բանալու համար: Բայց վակերէն միոյն մէջ Որբանոց մը բանալու համար իր առաջարկը չեղադութեան նպաստին:

— Քանի մը ձեռներէց ազգայիններ: որը կոյս հող մը կը մնտուն շերամարութութեան համար:

որոշեր են Ծափին Գարահիսարի կողմերն այսպիսի գործ մը հաստատել: Սմբատ Դ. Ա. Սաատիթեան սիրով յանձն առեր է անոնց տրամադրութեան ներքե գնել իր Վիճակին Ասեփերէն մէկը: և կյուսայ որ այս ձեռնարկութեան շնորհիւ տեղացի կարօտեալը շերամի և մետաքսի գործը պիտի սովորին: և Վանքերուն նուազ շահարեր հողերն ալ թթաստանի պիտի կրնան վերածուիլ:

— Նպաստից Յանձնաժողովն իր երեկուան նիստին մէջ Նկատողութեան առաւ Աստրախանի առաջնորդ Տ. Ս. Յիհստակէս եպսէ-ի մէկ գրութիւնը յայտնող թէ տեղոյն ազգայիններն ի յարգանս հանդուցեալ Պ. Զանշեանցի յիշասակին: անոր բացած որբանցներէն միոյն ապրուստն ապահովել փափաքած են. հիարցներ թէ նոյն որբանցներէն որոնք տրամադրելի են: թէ որբան որը կպարունակեն: և կրաւէ եթէ մէն մի որբի համար տարիական 50 րուպիի յատկացուի: Յանձնաժողովը նկատելով, որ Պ. Զանշեանց իր բացած որբանցներէն մէկ քանիին քառամեռյ շրջանին

թոշակները չե կրցած դրկել իր վաղահաս մահուան պատճառաւ, որոցից այդ կարգէն, Մշոյ և Ալաշ-կերտի որբանցներն յանձնաբարել՝ անսնց մին ընտրելու համար, ապազ պէտք եղած տեղեկութիւններն որբանցուոյն և այլ մանրամասնութեանց վրայ:

—Կարնոյ առաջն, տեղապահ 8. Զաւէն ՚Ծ, Վրդ. Խաստուր գիւղի ազգայնոց կարօս վիճակն յայտնելով կինդրէր, որ նոյն գիւղի մէջ որբանց մը և վարժարան մը հաստատելու համար նըսպատի գումար մը յատկացուի: Յանձնաժողովը նկատելով որ որբանցներու շրջանն արդէն լրանալու վրայ է, որոշեց ամսական մէկ ու կէս ոսկի յատկացնել նոյն գիւղին մէջ դպրոց մը բանալու համար:

—Ասկէ առաջ Երզնկայի Առաջնորդարանն 50 ոսկոյ գումար մը զրկուեցաւ գորդաշինութեան յատկացուելու համար, և առաջարկուեցաւ ի հարկին պէտք եղած գումարը դրկել այդ արհեստն յառաջացնելու համար: Յանձնաժողովը ցաւօք տեղեկանալով որ թէ Երզնկա և թէ ուրիշ տեղերը հակառակ նպաստից Յանձնաժողովը յանձնաբարութեանց գեռ և ոչ մէկ արհեստանոց իր արտադրութիւններէն մէկ մէկ նմոյշ զրկած է Պատրիարքարան, որոշեց կրկնել, որ փութացնեն մէյսէկ նմոյշ, որպէս զի Յանձնաժողովը գաղափար մը կալմէ եղած աշխատութեանց վրայ:

—Կրօնական Ժողովը նկատողութեան առաւ Խումանիոյ հոգեւոր հովուութեան խնդիրը, որ երկար ատենէ ի վեր Վարչութեան ու շարդրութեան առարկայ եղած է, և յետ խորհրդակցութեան որոշեց յանձնաբարել Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Երէցեան 8. Գէորգ. Արքալանի, որ մէկ-երկու ամսոյ արձակուրդով մը Խումանիա երթալով, բոլոր քաջաբներու հայոց եկեղեցական վիճակը քննէ և տեղեկագրէ Ժողովը, Ազգ. Վարչութեան ներկայացնելու և առանձինն հովուութիւն մը հաստակելու համար:

ՁՈՒԱՐԹՆՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ

ԲԵԼԵՌՈՋԵՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԻ *

Անձամբ բաղդ ունենալով այցելել և քննել Զուարթնոց եկեղեցու աւելանիերի տակից զուրու եկած բեւեռաձեւ արձանագրութիւնը, ներկայիւս տալիս եմ ամրողջական պարունակութիւնը իմ՝ Ժարդմանութեամբ: Յուսով եմ մէ բարձր. Խաչիկ Ծ, վ. Պատեհան նորանոր

* Բնագիրը հրատարակուած է Արտաքի անցեաւ տարուայ Օգոստ. Սեպտ. համարում:

դիւաներով ևս պիտի ձոխացնել, զիտութեան աղքատ գանձարանը:

Խարդմանութիւնն կը զետեղեմ առդ առաջ այն կարդաւ ինչպէս զրուած է, բնագիրն

1. Առաջարգի, տեառն աշխարհի, այս
2. արքանութ Խուսա
3. Արգելթիշեան շնորհ տուաւ:
4. Առ աղնիւ Խաղղիացիս
5. Խուսա Արգելթիշեան
6. Կըսէ. Խուսանեցի Կուտութիւն Երկիրը,
7. ամենայն ինչ որ ամեն կողմէ կը պատկանէր նրան
8. Եւ իր ամքող սահմանը
9. Խշանն Երկիր, Խալկի, ինձ չնորհեց Խալկին արձանը գնելու:
10. Ես այս Ճեղքը քանից Հաւաքանէ
11. Անապնեցի Խոնճի և կազմի ծառերով պարտէ կմը,
12. Խորս կենդրուում տնկեցի:
13. Մի քաղաք նրա կենդրուում հաստատելու համար
14. Ելդարունի գետէն ջամուղ մը
15. Պեղել տուի և զինեձօնք յանուն
16. Խուսացի Քըսմանաց գործադրութիւն—
17. Ըսդունեցի Զըմուղի տան պարիսպը շնորհ ցաւ (?) :
18. Խաղդի Աստուծոյ համար դառնուկ մը
19. Պարախն զոնէլ Աշխար մը խաղդի Աստուծոյ,
20. զոնի ոչխար մը Թէխսպա Աստուծոյ, ոչխար մը Արգինի Աստուծոյ,
21. Եթք ընծայ ներկայելով այդ աստուածներուն:
22. Զըմ աւաղանի առատութեան համար
23. Աւլ մը պէտք է զոնէլ խաղդի Աստուծոյ,
24. Աշխար մը Խաղդի Աստուծոյ, զոնի ոչխար մը Թէխսպա Աստուծոյ,
25. Աւլար մը Երգինի Աստուծոյ Եթք ընծայ ներկայելով այդ աստուածներուն,
26. Արգելթիշեան Խուսացի կողմէ, (որ է)
27. Եթքայ հզօր, արքայ մեծ արքայ +
28. Աշխարհիկ, արքայ Վանեցոց,
29. Եթքայ արքայից ևս և
30. Տոսպ քաղաքին:
31. Խուսա Արգելթիշեան
32. կըսէ. Ա՛վ որ այս արձանագրութիւնը
33. Եղծէ, ով որ վրայի անունը չնչէ,
34. Ա՛վ որ այս կարգագրութիւններն իբեն վերադրէ
35. Ա՛վ որ գետին տապալէ,
36. Ա՛վ որ ջոյ մէջ ձգէ,
37. Աւրիշ ով որ հետամտի թէ
38. «Ե՞ս կապնեցի», ով որ
39. Անունս չնչէ և իր անունը
40. Հոն գնէ, — լինի նա
41. Վանեցի մը, լինէ
42. Լուլութեցի մը, — որ Խաղդի,
43. Թէխսպա, Արգինի աստուածները
44. Թէ իր անունը, թէ նըս